

ԱՍԼԱՆԻ ՎԻՊԵՐԳԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ
THE FIRST VERSIONS OF THE BALLAD OF ASLAN
ПЕРВЫЕ ВЕРСИИ БАЛЛАДЫ АСЛАНА

Սամվել Ռամազյան
Samvel Ramazyan
Самвел Рамазян

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

samvel.ramazyan@ysu.am

Ներկայացվել է՝ 19.12.2025; գրախոսվել է՝ 02.02.2026; ընդունվել է՝ 14.04.2026
Received: 19.12.2025; Revised: 02.02.2026; Accepted: 14.04.2026
Представлено: 19.12.2025; рецензировано: 02.02.2026; принято: 14.04.2026

© Հեղինակ, 2026: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2026. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2026. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2026.1-234

Ամփոփում – Ասլանի վիպերգը («Ասլան աղա» կամ «Կագուան Ասլան») առաջին անգամ ի հայտ է եկել մոկաց բանասացներից Գարեգին Հովսեփյանի գրառած առաջին երկու տարբերակով՝ 1892 թ. հրատարակությամբ: Որոշ նկատառումներից ելնելով՝ բանահավաքը երկար ժամանակ խուսափել է բացահայտել իր տեղեկատու-բանասացներին: Առկա նյութի համեմատությամբ և վերլուծությամբ պարզվել է առաջին տարբերակի բանասացի ինքնությունը՝ Մոկացի Հովան, որը հայտնի է եղել նաև որպես «Սասնա ծռեր» էպոսի մեկ պատումի և այլ նյութերի բանասաց: Առաջին տարբերակներին է անդրադարձել Մանուկ Աբեղյանը, 1893 թ. հայկական մամուլում տպագրված գրախոսությամբ, որով էլ սկիզբ է դրվել վիպերգի ուսումնասիրությանը: Հետագա ժամանակահատվածում այլ հայ բանահավաքներ (Ս. Հայկունի, Հ. Օրբելի, Ս. Ավագյան) գրառել և հրատարակել են վիպերգի ևս երեք տարբերակ: Մեկ այլ տարբերակ հրատարակվել է, սակայն այնքան էլ հայտնի չի դարձել, ևս երկու տարբերակի ճակատագիրն անհայտ է: Այլ անտիպ տարբերակներ հայտնաբերվել են սույն հետազոտության ընթացքում և հավելյալ կներկայացվեն թեմայի ամբողջացումից հետո: Բովանդակային առումով տարբերակներն ունեն միևնույն սյուժեն, սակայն որոշակիորեն տարբեր են դրանց վերնագրերը, ըստ այդմ, նախապատվություն է տրվել «Ասլանի վիպերգ» անվանմանը: Վիպերգի առաջին իսկ հրատարակությունը մեծ ուշադրության է արժանացել գիտական և մշակութային շրջանակներում: Դրա հիման վրա են իրականացվել նաև վիպերգի առաջին թարգմանությունները ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով:

Abstract – The Ballad of Aslan ("Aslan Agha" or "Kaguan Aslan") first became known in 1892 with the publication of the first two versions, recorded by folklorist Garegin Hovsepian from Moks' narrators. For certain reasons, the folklorist for a long time avoided revealing the names of his informant-narrators. Through comparison and analysis of the available materials, the identity of the storyteller of the first version has been clarified: Mokatsi Hovan (Hovan from Moks), also known as the narrator of one of the versions of the epic "Sasna Tsrer" ("Daredevils of Sassoun") and other materials. The first versions were discussed by Manuk Abeghyan in a review published in the Armenian press in 1893, which marked the beginning of the study of the ballad. In the subsequent period, three more versions of the ballad were recorded and published by other Armenian folklorists (S. Haykuni, J. Orbeli, S. Avagyan). Another version was also published, but it did not become sufficiently known, and the fate of two more versions is unknown. Other unpublished versions were discovered during this research and will be presented in addition after the completion of the topic. In terms of content, the versions have the same subject, but their titles are somewhat different, therefore, preference was given to the name "Ballad of Aslan". The ballad's first publication attracted considerable attention in scholarly and cultural circles. It also served as the basis for the first translations of the ballad into French and Russian.

Аннотация – Баллада Аслана («Аслан Ага» или «Кагуан Аслан») впервые стала известна в 1892 г. благодаря публикации её первых двух версий, записанных фольклористом Гарегином Овсепяном с уст мокских сказителей. Исходя из ряда соображений фольклорист долгое время не предавал огласке имена своих информаторов-сказителей. На основе анализа имеющихся материалов была установлена личность сказителя первой версии: Мокаци Ован (Ован из Мокса), известный также как сказитель одного из вариантов эпоса «Сасна Црер» («Сасунские удальцы») и других произведений. Первые версии баллады были рассмотрены Мануком Абегианом в рецензии, опубликованной в армянской периодике в 1893 г., что положило начало изучению этой баллады. В последующий период были записаны и опубликованы ещё три версии баллады другими армянскими фольклористами (С. Айкуни, И. Орбели, С. Авагян). Была опубликована ещё одна версия, но она не получила особой известности, а судьба двух других версий неизвестна. В ходе этого исследования были обнаружены и другие неопубликованные версии, которые будут дополнительно представлены после завершения работы над темой. По своему содержанию версии имеют одинаковый сюжет, но их названия несколько отличаются, поэтому предпочтение было отдано названию «Баллада Аслана». Первая публикация баллады привлекла внимание широких научных кругов. На её основе также были сделаны первые переводы баллады на французский и русский языки.

Հիմնաբառեր – «Ասլանի վիպերգ», Գ. Հովսեփյան, «Ասլան աղա», «Կագուան Ասլան», Մոկս:

Keywords – "Ballad of Aslan", G. Hovsepian, "Aslan Agha", "Kaguan Aslan", Moks.

Ключевые слова – «Баллада Аслана», Г. Овсепян, «Аслан-ага», «Кагуан Аслан», Мокс.

Ներածություն

Վիպերգը (ballad) կարևոր տեղ է զբաղեցնում հայ ազգային բանահյուսության մեջ: Վիպական բանահյուսության չափաժողովը երգային ստեղծագործությունները սովորաբար փոքրածավալ են և ունեն հոգևոր, հերոսական, պատ-

մական և վարքաբանական բնույթ: Դրանք, սկզբնավորվելով հնագույն ժամանակներում, ունեցել են շարունակական բնույթ և արձանագրվել են նաև միջնադարում: Որոշակի տարածում են ունեցել հատկապես պատմական վիպերգերը, որոնք սովորաբար հյուսվել են որևէ պատմական հերոսի և իրադարձության շուրջ, էպոսի համեմատությամբ դրանք ունեցել են ամփոփ սյուժե: Ավելի ուշ շրջանում մի քանի տարբերակներով գրառվել է «Մոկաց Միրզա» վիպերգը: Այլ պատմական վիպերգեր մեզ չեն հասել զուտ այն պատճառով, որ բանավոր փոխանցվելով՝ ժամանակին չեն գրառվել: Մանուկ Աբեղյանի դիտարկմամբ, օրինակ, XIII դ.-ից մինչ մեր օրերն է հասել և XIX դ. վերջին գրառվել «Մարաթալանի» անհամեմատ փոքրածավալ երգը (Աբեղյան 1966, 497):

Ասլանի վիպերգը հայտնի է դարձել XIX դ. վերջերից, սկզբնական գրառումներով՝ «Ասլան աղա» («Ասլան Աղէն») անվամբ և դասվել միևնույն ժամանակահատվածում գրառված վիպական ստեղծագործությունների շարքը («Կարոս խաչ», «Մոկաց Միրզա», «Նարեկացի», «Ալեքսիանոս» ևն): Մյուս միջնադարյան վիպերգերի համեմատությամբ «Ասլան աղան» որևէ պատմական ենթաշերտ չի պարունակում և կապված չէ որևէ պատմական իրադարձության հետ, այլ առավելապես հիմնված է հնագույն հավատալիքների և պատկերացումների վրա: Մինչ այժմ հայտնի է եղել վիպերգի 5 տարբերակ՝ գրառված Գարեգին Հովսեփյանի, Սարգիս Հայկունու, Հովսեփ Օրբելու և Սերինե Ավագյանի կողմից, ընդամին, թեմայի հետազոտության ընթացքում հայտնաբերել ենք անհայտ և անտիպ այլ տարբերակներ, որոնք առանձին ուսումնասիրությամբ կներկայացնենք հետագայում:

Նշված բոլոր տարբերակներն էլ էական ընդհանրություններ ունենալով հանդերձ՝ որոշ մանրամասների առումով զանազանվում են իրարից: Որոշակիորեն տարբեր են նկարագրվում նաև իրադարձությունների մանրամասները, թեև ամեն դեպքում միևնույն հանգուցալուծմամբ: Փաստորեն, տարբեր են նաև վերնագրերը՝ «Ասլան աղա» («Ասլան աղէն», «Ասլան աղէն»), «Կագուան Ասլան» («Կագվան Ասլան»), «Ասլան Կակլան», ինչպես նաև բանահավաք Բենսեի (Սահակ Մովսիսյան) գրառած «Կական Ասլանը», որի տեքստը մեզ չի հասել (Ռամազյան 2025, 230–244): Ընդ որում, եթե հայ իրականության մեջ վիպերգն առավել հայտնի է եղել «Ասլան աղա» անվամբ, ապա արտերկրի գիտական շրջանակներին այն մինչ այժմ էլ առավելապես հայտնի է որպես «Կագուան Ասլան» (Kaguan Aslan), ինչի հիմք է հանդիսացել Սարգիս Հայկունու գրառած համանուն տարբերակը՝ բանահավաք և հայագետ Բագրատ Խալաթյանի գերմաներեն արձակ թարգմանությամբ և 1909 թ. Բեռլինի հրատարակությամբ (Chalatianz 1909, 368–369): Ըստ այդմ, սույն վիպական ստեղծագործության առնչությամբ առավել նպատակահարմար է թվում այսուհետև գործածել «Ասլանի վիպերգ» անվանումը, ինչն ամբողջությամբ արտահայտում է դրա ընդհանուր բովանդակությունը:

Գ. Հովսեփյանի գրառած առաջին տարբերակները

Վիպերգի առաջին գրառումն իրականացվել է բանահավաք Գարեգին Հովսեփյանի (Գարեգին Սարկավագ, 1867–1952 թթ.) կողմից և հրատարակվել

1892 թ., «Փշրանքներ ժողովրդական բանահիստությունից» ժողովածուի մեջ, «Ժողովրդական երգեր» ընդհանուր խորագրով (Յովսէփեանց 1892, 3–11): Նշվում է մոկաց բարբառով վիպերգի գրառված լինելը, սակայն բանասացի (բանասացների) և գրառման տեղավայրի ու ժամանակահատվածի մասին տեղեկություններ չկան: Վիպերգը գրառվել է երկու տարբերակով, առաջինը չափածո է՝ 104 տող (Յովսէփեանց 1892, 3–7), և երգվել է ամբողջությամբ, իսկ երկրորդ տարբերակը՝ 112 տող, ակնհայտորեն երգախառն է եղել (Յովսէփեանց 1892, 7–11): Այդ մասին է վկայում նաև բանահավաքի ծանուցումը. «Ասլան Աղէն» երգի մի ուրիշ վարիանսն է. արծակ գրուած մասը պատմում էր երգիչը» (Յովսէփեանց 1892, 7): Տվյալ ծանուցումից, փաստորեն, հայտնի է դառնում նաև գրառված ստեղծագործության տարբերակի անվանումը՝ «Ասլան Աղէն»:

Ընց «Ասլան աղա» անվամբ է ստեղծագործությունը հայտնի դարձել հայոց բանագիտական և ընդհանրապես գիտական-մշակութային շրջանակներում, անվանումը գերիշխում է նաև հետագայում գրառված վիպերգի այլ տարբերակներում: Առաջին իսկ հրատարակությունից հետո վիպերգը բավական հայտնի և սիրված է եղել հայոց մեջ, միևնույն ժամանակահատվածին է պատկանում նկարիչ Եղիշե Թադևոսյանի «Ասլան աղա» գեղանկարը (1912 թ.), որը ներկայումս պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում: Այն իրապես աչքի է ընկնում հայոց որմնանկարչության ավանդույթների պահպանմամբ և համարվում է նկարչի բարձրարվեստ ստեղծագործություններից մեկը: Գեղանկարի մասին 1928 թ. լավագույնս արտահայտվել է հենց Գ. Հովսեփյանը. «Անցյալի գեղեցկության և հայրենի կենցաղի հետ կապված ստեղծագործություններից հիշել կարող ենք Ասլան աղայի մարտը հրեշտակի հետ ֆրեսկան... Նկարիչը պատկերավորել է պարզ, միամիտ և մաքուր շրջանի հերոսի տիպը երգի տված մանրամասնություններով. Ասլան աղայի կեցվածքը, մկանների շարժումն ամբողջապես դյուցազնական շրջանի հերոսի ուժի մարմնավորումն է» (Հովսեփյան 1983, 153): Հայտնի է, որ Ե. Թադևոսյանը բավական մտերիմ էր Գ. Հովսեփյանի հետ, մասնավորապես 1911 թ. նրանք միասին մեկնել են Պաղեստին, «Հայկական մանրանկարչություն» ուսումնասիրության ամբողջացման համար (Հովսեփյան 1983, 348):

Վիպերգի առաջին իսկ հրատարակությանը ընդարձակ գրախոսությամբ 1893 թ. հունվարին «Նոր-Դարի» զույգ համարներում «Վարսամ» գրական կեղծանվամբ անդրադարձել է երիտասարդ հայագետ-բանահավաք Մանուկ Աբեղյանը՝ իրավամբ ընդգծելով վիպերգում հնագույն ենթաշերտերի առկայությունը (Վարսամ 1893, 2): Ընդհանուր առմամբ, Գ. Հովսեփյանի ժողովածուից Ասլանի վիպերգը («Ասլան աղի վէպը») անվանի բանահավաքը գնահատում է որպես առաջնագույն, դրան հաջորդում է «Վարոս խաչը»: Վիպերգի առնչությամբ այս առաջին ուսումնասիրությունն իրապես կարևորվում է, քանի որ Աբեղյանը հանդես է գալիս իր գիտական անադարտությամբ և անխաթարությամբ: Ավելի ուշ ժամանակահատվածի գրություններում Աբեղյանն ստիպված էր տեղի տալ

գաղափարախոսական ճնշմանը և գործածել մարքսիստական դասակարգային մոտեցմանը բնորոշ բառապաշար:

Գ. Հովսեփյանի բանասացները

Գ. Հովսեփյանը վիպերգի տարբերակները գրառել է երկու անանուն մոկացի բանասացներից: Ընդամին, «Փշրանքների» մեջ ընդգրկված նյութերի առնչությամբ բանահավաքը ծանուցում է հետևյալը. «Առաջինը պատմել է Բաղդասարի ճիւղը պատմող Մոկացին, իսկ երկրորդը՝ «Ս. Գէվորքը» Մոկացի Յեովանը, Մոկաց վարհանյի պատմողը» (Յովսէփեանց 1892, 32): Պարզ է, որ Գ. Հովսեփյանը, որոշ մտավախություններ հաշվի առնելով, ուղղակի չի ցանկացել ամբողջությամբ բացահայտել բանասացներին և նրանց տվյալները:

Նախքան վիպերգը պարունակող տվյալ հատորի հրատարակությունը միևնույն տարում՝ 1892 թ., «Ժողովրդագրական նիւթեր» մատենաշարի Ա հատորով հրատարակված «Սասմայ ծոերի» առաջաբանում Գ. Հովսեփյանը որոշ տեղեկություններ է հայտնում իր մոկացի բանասացների մասին, որոնցից էլ վստահաբար գրառել է նաև «Ասլան Աղէն». «Մոկաց բարբառով մեր գրած վարհանյները, երգերը, ասանդոթիւնները գրի ենք առել պանդուխտ Մոկացիներից. թէև լեզուի մաքրութեան մասին մեր ընթերցողներին երաշխատրել չենք կարող, բայց ճշտիւ արձանագրելու համար արել ենք այն, ինչ որ կարող էինք» (Սասմայ ծոեր 1892, Թ): Վերոհիշյալը փաստում է նաև մատենաշարի խմբագրական հանձնաժողովի ծանուցումը, թե «Երգերը, ասանդոթիւնները, հեքիայթները և բառարանը կը կազմեն մի առանձին հատոր» (Սասմայ ծոեր 1892, Թ), ինչն էլ իրականացվել է նույն թվականին մատենաշարի Գ հատորի տպագրությամբ:

Բնականաբար, Մոկսից դուրս աշխարհագրական այլ միջավայրում մոկացի բանասացները որոշակիորեն խառն բարբառով էին պատմում նյութը, թեև ամեն դեպքում բովանդակությունն անփոփոխ էր մնում: Վերոհիշյալ հանգամանքը նկատի առնելով՝ բանահավաքը շեշտում է. «Երգերի լեզուն իհարկէ անհամեմատ ատելի մաքուր է. նախ՝ իբրև ուրանատր՝ ատելի անփոփոխ է մնացած, երկրորդ՝ որ երգեր ասող Մոկացու լեզուն համեմատութեամբ ատելի ազատ էր մնացած ազդեցութիւնից» (Սասմայ ծոեր 1892, Թ): Միևնույն առաջաբանում նկատի առնելով վիպերգի հերոսուհի Մարգարիտին՝ Գ. Հովսեփյանը վերջինիս և էպոսի Խանդուօ Խաթունին բնորոշում է որպես «Հայ կնոջ հաւատարմութեան և ընտանեկան կեանքի մաքրութեան նշանաբաններ» (Սասմայ ծոեր 1892, Գ):

1898 թ. վերջին «Արարատ» հանդեսում տպագրված «Ժողովրդական բանահիւսութեան հետքեր միջնադարեան տաղարաններից» ուսումնասիրության մեջ բանահավաքը քննելով անանուն հեղինակի մի միջնադարյան տաղ՝ առաջին անգամ հարևանցիորեն նշում է վիպերգի բանասացին. «Այս տաղն ևս երգում են Մոկացիք, ինչպէս յայտնել է մեզ Ասլան աղի, Նարեկացու և միւս ժողովրդական երգերի թելադրող Մոկացի Յեովանը: Տարաբաղդաբար ինքն անգիր չգիտէր, թէև յաճախ լսել էր այդ երգն իր հայրենիքում» (Յովսէփեանց 1898, 546): Հատվածի ծանուցումից հետևում է, որ 1892 թ. հրատարակված ժո-

ղովածուի այլ նյութերի և վիպերգի տարբերակներից մեկի բանասացն է եղել Մոկացի Հեովանը (Հյովան): «Հեովանը» վստահաբար «Հովհաննես» անվան՝ Մոկսում տարածված արտասանության ձևն է եղել, ինչը դիտարկվել է նաև «Սասնա ծռերի» պատումներում՝ Ձենով Օհանի կերպարի առնչությամբ (Սասնայ ծռեր 1892, 135):

Ավելի ուշ՝ 1904 թ. հրատարակված «Ռոստամ Զալի» հայկական պատումների ուսումնասիրության մեջ Գ. Հովսեփյանն Ասլանի Բոգ-Բեդավ նժույգի զարդարանքը համանման է նկատում հայոց էպոսի Քուռկիկ Զալալիի և Ռոստամի դյուցազներգության նժույգի զարդարանքի հետ (Յովսեփեանց 1904, 13 հմմտ. Յովսեփեանց 1905, 13): Բանահավաքն արդարացիորեն նշում է. «Մեր բանահիստության լուսագոյն կտորները Մոկացոց ենք պարտական, ոչ միայն ազգային դիցազներգության գեղեցիկ վարիանտներ, այլ և այնպիսի վիպական երգեր, ինչպես Ասլան Աղէն, Մուկաց Միրզէն, Նարեկացին, Կարոս Խաչը: Դեռ ո՞վ գիտէ ինչ թանգագին գոհարներ անյայտ են բանասիրության» (Յովսեփեանց 1904, 29–30):

Եվ, վերջապես, 1904 թ. նոյեմբերին գրված միևնույն ուսումնասիրության մեջ վիպերգի հրատարակությունից 12 տարի անց Գ. Հովսեփյանն արդեն հստակ նշում է «Ասլան աղալի» առաջին տարբերակի բանասացին. «Ռոստամ-Զալը գրի ենք առել 1890 թուին Մայր աթոռի Ճեմարանում: Այդ տարին Ճեմարանում գիշերապահության պաշտոն էր կատարում Մոկաց Նորաանց գիտացի Ուստենց Յեովանը, ժողովրդական բանահիստության մի կենդանի շրջանարան: «Փշրանքների» նիւթի մի մասը՝ «Ասլան աղի» առաջին վարիանտը (եր. 3), «Մուկաց Միրզէն» (եր. 19), «Մեռու էն ինչ շար մալ ունէր» (եր. 21), «Յնծացէք, ուրախացէք» (եր. 23) և ապա մնացած երգերն ու առակները մինչև 31 երես: Նորանից ենք գրի առել նաև Ռոստամ-Զալը: Յեովանը զարմանալի ընդունակությամբ ունէր պատմելու համար. հեռու անելորդաբանությունից, համառօտ և կենդանի լեզուով: Նա կլինէր մտաւորապէս յիսուն տարեկան. կաղ էր, այդ պատճառով էլ շարերի կողմից «կաղ Յեովան» կոչուած, բայց սրտոտ և կրրիծ: Կարդալ և գրել չ'գիտէր, բայց իւր պանդուխտ հայրենակիցների շրջանում համարում էր որպէս բանիմաց մարդ: Մի քանի տարուց ի վեր վախճանուած է արդէն իւր հայրենի գիւղում» (Յովսեփեանց 1904, 39; հմմտ. Յովսեփեանց 1905, 39):

Այսպիսով, պարզ է դառնում, որ վիպերգի բանասացներից մեկն է Մոկսի Նորաանց գյուղից սերող Ուստենց Հեովանը (Հյովան), ծնվ. մոտ 1840 թ., առժամանակ փոխադրվել և հանգրվանել է Արևելյան Հայաստանում, եղել Վաղարշապատի ճեմարանի գիշերապահ: Ասլանի վիպերգից բացի, իմացել և պատմել է այլ վիպական նյութեր ևս, վերադարձել է ծննդավայր, որտեղ վախճանվել է մինչև 1904 թ.: Նորավանը, Նորավանցը կամ Նորովանցը Մոկսի գավառակի գյուղերից էր, Մոկսում գրառված որոշ հեքիաթների գործողություններ են նկարագրվում հենց տվյալ գյուղում (Մոկս 2015, 23):

Հարկ է նշել, որ արդի որոշ հրատարակություններում բանասացի անունը ճիշտ չի փոխանցվել, օրինակ, «Ուստենց Եսվան (Կաղ Եսվան)» (Մոկս 2015, 24, 627), «Ուստենց Յեսվան» (Ռոստամ Զալ 2021, 28):

Միևնույն դիրքորոշումը Գ. Հովսեփյանը դրսևորել է նաև մոկաց բանասացներից իր գրառած «Սասնա ծռերի» պատումների առնչությամբ: Եթե, օրինակ, Ապարանի բանասացի ինքնությունը բավարար չափով նշվում է (Զամրու գյուղի ժամհար Մուրադ), ապա մյուս դեպքում հավաքական ձևով նշվում են անանուն «պանդուխտ Մոկացիները» (Սասնայ ծռեր 1892, Ը–Թ): Այլ առիթներով բանահավաքը համանման նշումներ է անում. «Այս ճիւղը պատմել է մեզ տասնեակ տարի մեր կողմերում ապրած մի Մոկացի» (Սասնայ ծռեր 1892, 67): Կամ՝ «Այս ճիւղը պատմել է մի ուրիշ Մոկացի, որ շատ տարիներից ի վեր բնակուում էր Շիրակում» (Սասնայ ծռեր 1892, 79): Ի վերջո, ժողովածուի Դավթի ճյուղի սկզբում բերված երգվող հատվածի ծանուցմամբ, բանահավաքը հարևանցիորեն բացահայտում է բանասացին, որը ոչ այլ ոք է, քան Ասլանի վիպերգի ծանոթ բանասացը. «Այս կտորը երգում էր Մոկացի Յեովանը, վարիանտիս պատմողը» (Սասնայ ծռեր 1892, 80): Գրառված պատումը հետագայում տողատվել և ընդգրկվել է 1936 թ. կազմված համահավաք բնագրի 1-ին հատորում (Ե պատում), սակայն նոր ուղղագրության պայմաններում բանասացի անունը երկու անգամ նշվել է որոշակիորեն փոփոխված ձևով՝ «Մոկացի Հովան» (Սասնա ծռեր 1936, 157–159): Միևնույն բանասացից Գ. Հովսեփյանի գրառած «Սասնա ծռերի» պատումում Ձենով Օհանը կամ Հովանը բանասացի անվան նմանությամբ բազմիցս նշվում է որպես «Ձենով Յեովան» (Սասնայ ծռեր 1892, 135 ևն): Խմբագրության կողմից պատումի առաջաբանում որևէ հավելյալ տվյալ չի նշվել, ըստ ամենայնի, դրա բացակայության պատճառով:

«Սասնա ծռերի» տվյալ պատումի բանասաց Մոկացի Հովանի առնչությամբ ենթադրելի է, որ նա պանդխտության՝ արտագնա աշխատանքի բերումով կամ որևէ այլ հանգամանքով բազմիցս հայտնվել է Մոկսից դուրս, ամենայն հավանականությամբ, առժամանակ նաև Իրանի Ատրպատական (Ադրբեջան) երկրամասում, ըստ այդմ, ներմուծել է «Հադրբեջան» տեղանունն էպոսի իր ասած տարբերակում (Սասնայ ծռեր 1892, 137), ինչն անսխառեպ է էպոսի այլ պատումների համեմատ: Անտարակույս, դրա արտահայտությունն է Հադրբեջանի հետ նաև «Ռուսըստանի» հիշատակությունը (Սասնայ ծռեր 1892, 130; հմմտ. Սասնա ծռեր 1936, 220): Ակնհայտ է, որ բանասացն, իրոք, դեպքերի բերումով հայտնվել է առնվազն Արևելյան Հայաստանում, այն է՝ Ռուսական կայսրության տարածքում, որտեղ էլ գրառվել է տվյալ պատումը: Մ. Աբեղյանի գնահատմամբ, «Վիպասանը պատմութեան շարունակութեան մէջ անսպասելի կերպով շուտ է տալիս Գիւրջիստանի տեղ Հադրբեջան է դնում և այնուհետև այդ երկու անունը խառն գործածում» (Աբեղյան 1908, 91): Բնականաբար, բարբառը փոխելով՝ փոփոխվել են նաև ավանդական տեղանունները, տեղայնացվել ու հարմարեցվել նոր միջավայրին, ինչը դիտարկվում է բազմաթիվ այլ պատումների պարագային ևս, այդ թվում՝ Իրանի Ատրպատականում (Թավրիզի շրջանում)

առժամանակ բնակված մեկ այլ՝ պանդուխտ մոկացի բանասաց Մոկացի Վարդանի պարագային (ԷԱԺ 1901, 19):

Փաստորեն, Ասլանի վիպերգի և «Սասնա ծռերի» պատումներից մեկի բանասացը միևնույն անձն է՝ Մոկացի Հյովանը կամ Հովանը:

Վերոհիշյալի հաշվառմամբ հավանական է թվում, որ Գ. Հովսեփյանը որոշ նկատառումներով ժամանակին ուղղակի չի ցանկացել լիովին բացահայտել իր տեղեկատու բանասացին (բանասացներին): Ըստ ամենայնի, որոշակի դեր է խաղացել ժամանակին գոյություն ունեցած արատավոր պրակտիկայից խուսափելու մտահոգությունը, քանի որ հրատարակության շնորհիվ տեղեկատու բանասացի տվյալների բացահայտումից հետո որևէ նոր բանահյուսական նյութ գրառելու նպատակով նրան կարող էին դիմել այլ բանահավաքներ ևս: Բնականաբար, Վաղարշապատում հանգրվանած լինելով՝ մոկացի բանասացը բավական հասանելի էր և գայթակղիչ՝ որևէ սկսնակ կամ մասնագետ բանահավաքի համար:

Միևնույն նկատառումներով ենթադրելի է, որ Ասլանի վիպերգի երկրորդ տարբերակի անանուն բանասացը ևս արտագնա աշխատանքի կամ այլ հանգամանքների բերումով Վաղարշապատում հաստատված մոկացի է եղել, որը 1904 թ. տակավին կենդանի պիտի լիներ:

Ինչպես բանահյուսական այլ ստեղծագործությունների դեպքում, փաստորեն, Գ. Հովսեփյանն է սկիզբ դրել Ասլանի վիպերգի գրառումներին:

Վիպերգի առաջին տարբերակի թարգմանությունները

Գ. Հովսեփյանի գրառած վիպերգի առաջին տարբերակը ֆրանսերեն է թարգմանել հայտնի սիյուռքահայ գրող Արշակ Չոպանյանը (1872–1954 թթ.). այն հրատարակվել է 1903 թ., Փարիզում, «Հայ ժողովրդական երգեր» ժողովածուի մեջ, Le Seigneur Aslan վերնագրով (Chants populaires arméniens 1903, 173–177): Ընդգրկված լինելով երգարվեստին նվիրված ժողովածուի մեջ՝ այն պատշաճ ուշադրության չի արժանացել եվրոպական գիտական հանրության կողմից: Ֆրանսերեն հրատարակության առնչությամբ հայտնի է բանահավաք Տիգրան Չիթունու 1932 թ. Փարիզի «Յառաջ» թերթում տպագրած անդրադարձը, որում քննադատվում են Ասլանի վիպերգի բնագրին անհարազատ թարգմանության որոշ պահեր (Չիթունի 1932, 3):

Գ. Հովսեփյանի գրառած միևնույն տարբերակը 1916 թ. ռուսերեն է թարգմանել և «Владыка Аслан» վերնագրով հայ բանաստեղծության ժողովածուի մեջ հրատարակել Վալերի Բրյուսովը (1873–1924 թթ.)՝ այն նշելով որպես հեքիաթ, սակայն, այդուամենայնիվ, հրատարակելով էպոսի բաժնում (Брюсов 1916, 130–134): Ակնհայտ է, որ Բրյուսովն ամեն դեպքում այս կերպ ընդգծել է ստեղծագործության վիպական բնույթը՝ այն ընդգրկելով «Սասնա ծռեր» էպոսի հետ միևնույն շարքում: Նշված հանգամանքը մատնանշվում է նաև հրատարակության խմբագրության առաջաբանում (Брюсов 1916, 12), իսկ Բրյուսովն ինքն ընդգծում է, որ «Ասլան աղայի» մեջ «մաքուր արևելյան սյուժեն մշակվել է քրիստոնեական

շնչով» (Брюсов 1916, 40): Բացի այդ, ծանուցման մեջ կարծիք է հայտնվում, որ հեքիաթի (վիպերգի) հիմքում ընկած է «*հավատարիմ կնոջ մասին համաարիական առասպելը*», ինչն առավել հայտնի է Ադմետոսի և Ալկեստիսի մասին գրույցի հունական մշակմամբ (Брюсов 1916, 497–498): Նմանապես նշվում է, թե, որոշ տեսակետների համաձայն, «*սյուժեն Հայաստան է վերադարձել արևելյան մշակումների (պարսկական և արաբական) միջնորդավորմամբ*» (Брюсов 1916, 498), ինչն, անշուշտ, վիճելի է և բավարար կերպով հիմնավորված չէ:

Երկու տեքստերի համեմատությունից ի հայտ է գալիս միայն մեկ անհամապատասխանություն. Վ. Բրյուսովի թարգմանության մեջ վիպերգի վերջում Աստծո կողմից զուգահեռ շնորհված կյանքը նշվում է 200 տարի (Брюсов 1916, 134), ինչը, սակայն, զուտ գեղարվեստական մտահղացում է և միանգամայն տարբեր ինչպես Գ. Հովսեփյանի, այնպես էլ մյուս բանահավաքների գրառած տարբերակներից:

Վ. Բրյուսովի ծանուցմամբ, «Ասլան աղայի» թարգմանությունն իրականացվել է հայագետ Կարապետ Կոստանյանի (1853–1920 թթ.) հրատարակած տեքստի հիման վրա (Брюсов 1916, 494): Սակայն 1892–1903 թթ. Թիֆլիսում և Վաղարշապատում վերջինիս հրատարակած՝ «Նոր ժողովածու: Միջնադարեան հայոց պաղեր եւ ուրանատորներ» ուսումնասիրության 4 պրակում էլ վիպերգն ընդգրկված չէ: Ըստ ամենայնի, Կ. Կոստանյանի կողմից այլ նյութերի հետ բանաստեղծին առձեռն փոխանցվել է Գ. Հովսեփյանի գրառած տարբերակի տողացի թարգմանությունը: Միաժամանակ, չի բացառվում նաև, որ Բրյուսովն ինքն օգտված լինի Չոպանյանի ֆրանսերեն թարգմանությունից, ինչպես այլ ստեղծագործությունների պարագային (Լեո 1989, 383–384): Ժամանակին միևնույն միտքն է հայտնել նաև վիպերգի հայտնի հետազոտող Արիստիդ Դովատորը՝ ֆրանսերեն և ռուսերեն տեքստերի համեմատությունը կատարելով (Доватор 1992, 243):

Եզրակացություններ

1. Ասլանի վիպերգի ուսումնասիրությունն սկզբնավորվել է Արևելյան Հայաստանում հանգրվանած տարբեր մոկացի բանասացներից՝ Գ. Հովսեփյանի գրառած երկու տարբերակների 1892 թ. հրատարակությամբ:

2. Ժամանակին առկա որոշ մտավախություններից ելնելով՝ Գ. Հովսեփյանը չի ցանկացել բացահայտել իր տեղեկատու-բանասացների ինքնությունը: Ներկա ուսումնասիրության արդյունքներով պարզաբանվում է առաջին տարբերակի բանասացի ինքնությունը, որը հայտնի է եղել նաև «Սասնա ծռերի» պատումի և այլ բանահյուսական նյութերի գրառումներից, այն է՝ Մոկսի Նորավանց գյուղից սերող Մոկացի Հովան (Ուստենց Հեովան, Կաղ Հեովան):

3. Ընդհանրապես, վիպերգի առաջին օտարալեզու թարգմանությունն իրականացվել է ֆրանսերենով և հրատարակվել 1903 թ., և ոչ թե ավելի ուշ: 1916 թ. Վ. Բրյուսովի ռուսերեն թարգմանությունը, ըստ ամենայնի, կատարվել է տվյալ թարգմանության հիման վրա:

Շնորհակալական

Հոդվածը գրելու ընթացքում իրականացված խորհրդատվության համար շնորհակալություն ենք հայտնում մեր գիտական ղեկավար, ք.գ.դ. Ա.Ե. Պետրոսյանին և ք.գ.թ. Տ.Ս. Դալայանին:

Գրականություն/References/Литература

1. Աբեղյան Մ. 1908, Հայ ժողովրդական վէպը: Արտատպում «Ազգագրական հանդէսից», Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպարան օր. Ն. Աղանեանի:
Abeghian M. 1908, The Armenian Folk Novel. Printed from the Ethnographic Journal, Tiflis, El. Printing House of Ms.N. Aghanian (in Armenian).
2. Աբեղյան Մ. 1966, Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Abeghyan M. 1966, Works, vol. 1, Yerevan, Publication of the Academy of Sciences of the Arm. SSR (in Armenian).
3. ԷմԺ (Էմինեան ազգագրական ժողովածու) 1901, հ. Բ, Ժողովրդական բանասուրբ գրականութեան տեսակներ, Մոսկուա-Վաղարշապատ, Լազարեանց Ճեմարան Արևելեան լեզուաց:
Eminian Ethnographic Collection 1901, vol. 2, Types of Folk Oral Literature, Moscow-Vagharshapat, Lazarian (Lazarev) Institute of Oriental Languages (in Armenian).
4. Լեո 1989, Երկերի ժողովածու, 10 հատորով, հ. IX, գրախոսություններ, հոդվածներ, ուսումնասիրություններ, Երևան, «խորհրդային գրող»:
Leo 1989, Collection of Works, 10 volumes, vol. IX, Reviews, Articles, Studies, Yerevan, Khorhrdayin Grogh (in Armenian).
5. Հովսեփյան Գ. 1983, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Hovsepyan G. 1983, Materials and Studies on the History of Armenian Art, vol. 1, Yerevan, Publication of the Academy of Sciences of the Arm. SSR (in Armenian).
6. Մոկս 2015, Հայոց բանահյուսական մշակույթը, Երևան, «Գիտություն»:
Moks 2015, Armenian Folklore Culture, Yerevan, Gitutyun (in Armenian).
7. Յովսեփեանց Գ. 1892, Փշրանքներ ժողովրդական բանահիստութեանից: Ժողովրդագրական նիւթեր, գիրք Գ, Թիֆլիս, տպարան Մ. Շարաձէի:
Hovsepants G. 1892, Fragments of Popular Folklore. Folklore Materials, Book 3, Tiflis, Publishing House of M. Sharadze (in Armenian).
8. Յովսեփեանց Գ. 1898, Ժողովրդական բանահիստութեան հետքեր միջնադարեան տաղարաններից, Արարատ, ԼԲ տարի, N ԺԱ-ԺԲ, նոյեմբեր-դեկտեմբեր, 544-551:
Hovsepants G. 1898, Traces of Folklore from Medieval Books of Songs, Ararat, Year 12, N 11-12, November-December, 544-551 (in Armenian).
9. Յովսեփեանց Գ. 1904, Ռոստամ Չալ. Ժողովրդական վէպ (Մոկաց բարբառով), Ազգագրական հանդէս, գ. XII, 5-39:
Hovsepants G. 1904, Rostam Zal: A Folk Novel (in Moks' Dialect), Ethnographic Journal, vol. 12, 5-39 (in Armenian).

10. Յովսէփեանց Գ. 1905, Ռոստամ Զալ. Ժողովրդական վէպ (Մոկաց բարբառով), Թիֆլիս, Արագատիպ Մ. Մարտիրոսեանցի:
Hovsepian G. 1905, Rostam Zal: A Folk Novel (in Moks' Dialect), Tiflis, Quick Printing House of M. Martirosians (in Armenian).
11. Չիթունի 1932, Հայ ժողովրդական երգեր, Ե մաս, Յառաջ (Փարիզ), Ը տարի, N 1887, մայիս 24, 2–3:
Chitouni 1932, Armenian Folk Songs, Part 5, Haratch (Paris), Year 8, N 1887, May 24, 2–3 (in Armenian).
12. Ռամազյան Ս. 2025, Ասլանի վիպերգի անհայտ տարբերակը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1 (673), 230–244:
Ramazyan S. 2025, The Unknown Version of the Ballad of Aslan, Herald of Social Sciences, N 1 (673), 230–244 (in Armenian).
13. Ռոստամ Զալ 2021, Հայ-իրանական դյուցազնավէպ: Պատումների ժողովածու, Երևան, ՀԱԻ հրատ.:
Rostam Zal 2021, Armenian-Iranian Epic. Collection of Versions, Yerevan, Publishing House of the Institute of Archaeology and Ethnography (in Armenian).
14. Սասնայ ծեր 1892, Սասունցի Դաւիթ ժողովրդական վէպի երկու նոր վարիանտներ (Աբարանի և Մոկաց բարբառներով): Ժողովրդագրական նիւթեր, գիրք Ա: Գրի առաւ Գարեգին Սարկաւազ {Յովսէփեանց}, Թիֆլիս, Տպարան Մ. Շարաձէի:
Sasma Tsrer (Daredevils of Sassoun) 1892, Two New Variants of the Folk Tale David of Sassoun (in Abaran and Moks Dialects). Demographic-Folklore, Book 1. Written by Garegin Deacon {Hovsepian}, Tiflis, M. Sharadze Press (in Armenian).
15. Սասնա ծեր 1936, ժողովրդական վէպ, հ. Ա, խմբագրեց Մ. Արեղյան, աշխատակցությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, «Պետհրատ»:
Sasna Tsrer (Daredevils of Sassoun) 1936, Folk Epic, vol. 1, Ed. by M. Abeghyan, With Cooperation of K. Melik-Ohanjanyan, Yerevan, State Publishing House (in Armenian).
16. Վարսամ 1893, Մատենախօսութիւնք, Նոր-Դար, X տարի, N 8, 19 Յունուարի, 2–3:
Varsam 1893, Book Discussions, Nor-Dar, Year 10, N 8, January 19, 2–3 (in Armenian).
17. Chalatianz B. 1909, Armenische Heiligenlegenden, Zeitschrift des Vereins für Volkskunde. begründet von K. Weinhold, Behrend & Co, Berlin, 361–369.
18. Chants populaires arméniens 1903, Traduction Francaise avec une introduction par A. Tchobanian. Préface de P. Adam, Societe d'editions littéraires et artistiques, Librairie P. Ollendorff, Paris.
19. Брюсов В.Я. 1916, Поэзия Армении с древнейших времен до наших дней в переводе русских поэтов, Москва, Издание Московского Армянского комитета.
Brusov V.Y. 1916, Poetry of Armenia from Ancient Times to the Present Day, Translated by Russian Poets, Moscow, Publication of the Armenian Committee of Moscow (in Russian).
20. Доватур А.И. 1992, Миф об Алкестиде и армянское сказание о кагуане Аслане, Этюды по античной истории и культуре Северного Причерноморья, СПб., «Глаголь», 219–255.
Dovatour A.I. 1992, The Myth of Alcestis and the Armenian Legend of the Kaguan Aslan, Studies in the Ancient History and Culture of the Northern Black Sea Region, St. Petersburg, Glagol, 219–255 (in Russian).